Ռաֆիկ Պետրոսյան
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավաբ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

Նունե Ջոմարդյան
ԵՄՀ միջազգային կապերի եւ հետազոտությունների կենտրոնի պատասխանատու, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն ամբիոնի հայցորդ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԿՅԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Հոդվածը նվիրված է «մարդու արժանապատիվ կյանք»-ի հասկացության՝ որպես սոցիալական պետության հիմնական նպատակներից մեկի, վերլուծությանը: Հետազոտության ընթացքում հաշվի են առնվել վերջին տասնամյակում ազգային և միջազգային մակարդակներում տեղի ունեցող զարգացումները, որոնք նոր մոտեցումներ ու պահանջներ են առաջադրում սոցիալական պետություններին՝ հատկապես շեշտադրելով մարդկության կայուն զարգացման կարևորությունը: Հեղինակները «մարդու արժանապատիվ կյանք» եզրույթի վերաբերյալ մոտեցումներն ու սահմանադրական հայեցակարգավորման խնդիրներն ուսումնասիրել են՝ հիմնվելով մասնագիտական գրականությունում առկա տեսակետների իրավահամեմատական վերլուծությունների, ինչպես նաև մարդակենտրոն սահմանադրության, բոլորի և յուրաքանչյուրի իրավունքների իրականացման, հավասար հնարավորությունների ու մեկնարկային պայմանների ապահովման, ոչ ոքի չանտեսելու պահանջների վրա: Հոդվածում ներկայացվել են նաև նշված խնդիրների լուծման հնարավոր ուղիները:

Հիմնաբառեր. արժանապատիվ կյանք, սոցիալական, պարտականություն, հնարավորություններ, իրավական, սահմանադրություն:

Ներածություն

Սոցիալական պետության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման համար կարևորվում է «մարդու արժանապատիվ կյանք»

հասկացությունը: Իրավաբանական գրականության մեջ այն օգտագործվում է որպես սոցիալական պետության չափանիշ և նպատակ, կառավարության սոցիալ-տնտեսական նպատակադրույթ, յուրաքանչյուրի պահանջ, նաև անձնական իրավունք: Բնութագրիչների նման բազմազանությունը ցույց է տալիս, որ վերջինս առանցքային դերակատարություն ունի հասարակության սոցիալական զարգացման և սոցիալական բնագավառի իրավական կարգավորման հարցերում: Այդ իսկ պատճառով ՀՀ Սահմանադրության տեսության և պրակտիկայի սոցիալականացման պայմաններում էական է դառնում արժանապատիվ կյանքի համապարփակ վերլուծությունը գիտական, նորմատիվ իրավական և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից, սերտորեն առնչվելով նաև հասարակության սոցիալական զարգացման տարբեր բնութագրիչներին և սոցիալական ոլորտի իրավական կարգավորման հիմնախնդիրներին: Հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել «մարդու արժանապատիվ կյանք»-ի տեղն ու դերը սոցիալական պետության սահմանադրահիրավական հայեցակարգում, արտածել այն բնութագրիչները, որոնք հատկանշական են տվյալ հասկացությանը՝ պետության և հասարակության առջև ծառացած արդի հիմնախնդիրների պայմաններում:

Մեթոդ և տեսական հիմքեր

Ուսումնասիրությունն իրականացվել է մասնագիտական գրականությունում առկա տեսակետների իրավահամեմատական վերլուծության հիման վրա: «Արժանապատիվ կյանք» հասկացության խնդիրները վերլուծվել են՝ հիմնվելով մարդակենտրոն սահմանադրության նորմերի ապահովման, բոլորի և յուրաքանչյուրի իրավունքների իրականացման, հավասար հնարավորությունների ու մեկնարկային պայմանների ապահովման պահանջների վրա:

Մարդու արժանապատիվ կյանքի՝ որպես սոցիալական պետության նպատակի վերաբերյալ առկա մոտեցումները

«Մարդու արժանապատիվ կյանքը» սահմանադրագիտության մեջ հիմնականում դիտարկվում է որպես սոցիալական պետության, նրա սոցիալական քաղաքականության, երկրի սոցիալական զարգացման նպատակ: Չնայած եզրույթաբանական այս տարբերություններին, Ս.Ցու. Արբուզովի իրավացի դիտարկմամբ խոսքը գնում է միևնույն կատեգորիայի, այն է՝ մարդու արժանապատիվ կյանքի՝ որպես սոցիալական պետության հիմնական նպատակներից մեկի, մասին (Арбузов, 2014, էջ 77): Չնայած դրան, մի շարք սահմանադրագետներ արժանապատիվ կյանքը դասում են սոցիալական պետության ոչ թե նպատակների, այլ՝ խնդիրների շարքին: Նման դիրքորոշում են արտահայտում օրինակ՝ Բ.Ն. Տոպորնինը, Է.Ն. Կոկոտովը, Մ.Ի.Կուկուշկինը: Ըստ «ՀՀ սահմանադրական իրավունք» դասագրքի հեղինակների՝ «Սոցիալական պետության խնդիրն է, ամենից առաջ, յուրա-

քանչյուր քաղաքացու համար ապահովել մարդու արժանավայել նվազագույն կենսամակարդակ» (Այվազյան և ուրիշներ, 2016, էջ 134): Հասկացական բնույթի նման տարաձայնությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս որպես սոցիալական պետության «նպատակ» չունի հստակ սահմանադրաիրավական ամրագրում: Այն չի հիշատակվում ՀՀ Սահմանադրության նախաբանում ամրագրված այն բարձրագույն նպատակների, արժեքների և սկզբունքների շարքում, ինչպիսիք են հայրենիքի հզորացումը և բարգավաճումը, սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը և քաղաքացիական համերաշխությունը: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, արժանապատիվ կյանքն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե որպես միջոց նպատակին հասնելու համար, այլ՝ որպես նպատակադրույթ, որին պետք է ձգտի հասնել պետությունը[1]: Նման դատողությունն արտածվում է նաև ՀՀ Սահմանադրության նախաբանի ընդհանուր բովանդակությունից, քանի որ առանց անհատի բարեկեցության հնարավոր չէ ապահովել ընդհանուրի բարեկեցությունը: Դրա մասին է վկայում նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. հուլիսի 18-ի ՍԴՈ-816 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ Սահմանադրությամբ առաջադրված նպատակները «ներառում են համընդհանուր բարօրությունը, անհատի բարոյական, նյութական, ֆիզիկական բարեկեցությունը, սոցիալական առավելագույն պաշտպանվածությունը»:

Մարդու արժանապատիվ կյանքը որպես սոցիալական պետության նպատակ վերլուծելու, նրա տեղն ու դերը մյուս նպատակների շարքում գնահատելու համար կարևոր է վերջինիս բովանդակության բացահայտումը:

Ի.Է.Ստարշովայի կարծիքով արժանապատիվ կյանքը ներառում է անձի նյութական կենսապահովման բավարար մակարդակ, այսինքն՝ նյութական ապահովվածություն զարգացած հասարակության չափանիշներին համապատասխան, մարդու առողջությունն ապահովող պայմաններ և լիարժեք հանգստի հնարավորություն, անձի մտավոր, բարոյական և հոգևոր զարգացման համար ազատ ժամանակ ունենալու իրավունք (Старшова, 2004, էջ 12):

ՌԴ Սահմանադրության մեկնաբանները նշում են, որ արժանապատիվ կյանքը սահմանադրաիրավական իմաստով այն նվազագույն չափանիշն է, որն՝ իրեն սոցիալական հռչակած պետությունը պարտավոր է ապահովել իր յուրաքանչյուր քաղաքացու համար (Дмитриев, Ю.А., отв. ред. , 2009, էջ 35):

Օ.Պ.Բերեդինայի բնութագրմամբ՝ արժանապատիվ կյանքն այնպիսի իրավական նորմերի համակցություն է, որոնք երաշխավորում են նյութական անվտանգությունը, մշակութային արժեքների մատչելիությունը, անձնական և ընտանեկան անվտանգության իրավունքը ինչպես աշխատողների, այնպես էլ նրանց համար, ովքեր չեն կարող աշխատել» (Беребина,

1 Ըստ Արդի հայերենի բացատրական բառարանի (1976) նպատակն այն է, ինչին ձգտում են, ուզում են հասնել, իսկ խնդիրը դա այն է, ինչն անհրաժեշտ է, առաջադրվում է կատարել նպատակին հասնելու համար, խնդրահարույց իրավիճակ (Աղայան, 1976, էջեր 586, 1083):

1999, էջ 9): Բ.Ս.Էբզեևը արժանապատիվ կյանքը կապում է մարդուն արժանի նվազագույն կենսամակարդակի, զարգացած հասարակության չափանիշների մակարդակի նյութական բավարարվածության, ժամանակակից քաղաքակրթության նյութական և սոցիալական առավելություններին տիրապետելու և օգտագործելու հնարավորությունների հետ՝ բնակարանային և բժշկական օգնություն, անձնական անվտանգություն և սոցիալական ապահովություն, մշակութային արժեքների մատչելիություն և այլն (Эбзеев, 2008, էջ 85):

Ակնհայտ է, որ վերը նշված սահմանումները շատ ընդհանրական են, անորոշ և արժանապատիվ կյանքը դիտարկում են որպես կոնկրետ պետությունում առկա կյանքի մակարդակն ու որակը բնութագրող կատեգորիա:

Արժանապատիվ կյանքի իրավական բովանդակությունը որոշակիացնելու նպատակով Ս.Յու.Արբուզովը այս երկու ցուցանիշներին ավելացնում է սոցիալական իրավունքների և ազատությունների իրականացման իրավական երաշխիքները (Арбузов, 2014, էջ 83): Այնուամենայնիվ, նա ևս արժանապատիվ կյանքը դիտարկում է միայն սոցիալ-տնտեսական իրավունքների իրացման տեսանկյունից:

Ի հակակշիռ այս մոտեցումների, Ի.Ս.Սալիխովան գտնում է, որ արժանապատիվ կյանքի դիտարկումը կյանքի «մակարդակի» և «որակի» կատեգորիաների տեսակետից ամբողջապես չեն բնութագրում վերջինիս հայեցակարգը և աղքատիկ բնույթ են հաղորդում նրա բովանդակությանը: Ըստ այս հեղինակի՝ անձի կյանքը արժանապատիվ է միայն այն դեպքում, երբ դա մի կողմից, տրամաբանական հետևանք է հասարակական և անհատական գիտակցության մեջ մարդկային արժանապատվության մասին գոյություն ունեցող գաղափարների, իսկ մյուս կողմից՝ ինքնին մարդու ստեղծագործական արարման հատուկ արդյունք է և մարդու բնական իրավունք (Салихова, 2009, էջ 130): Այս մոտեցմամբ Սալիխովան փորձում է դուրս գալ սոցիալ-տնտեսական (որպես «սպառողական զամբյուղ», «նվազագույն կենսամակարդակ») պատկերացումների նեղ շրջանակներից, սակայն սահմանափակվում է վերջինիս հոգևոր, գաղափարական, բարոյական շեշտադրումներով:

Ամատիա Սենի պնդմամբ՝ մարդու կյանքը պետք է լինի արժեքավոր, այսինքն՝ ընդլայնի մարդու հնարավորությունները և դրա հետևանքով՝ վերջինիս իրավունքները: Նրա «կարողության մոտեցումը» հաշվի է առնում, թե ինչ կարող են անել մարդիկ և իրականում ընտրության ինչ հնարավորություններ կան նրանց համար: Ուշադրության կենտրոնում է երջանիկ լինելու, ինքնահարգանքի հասնելու, համայնքի կյանքին մասնակցելու իրագործելիությունը, ինչպես նաև այնպիսի կյանք վարելու հնարավորությունը, որը նրանք արժևորում և ցանկանում են (Sen, 1993, էջ 36): Սակայն, Սենի մոտեցման մեջ շեշտը դրվում է առանձին մարդկանց վրա, անտեսվում է սոցիալ-տնտեսական զարգացման մեջ կոլեկտիվ գործողությունների կարևորությունը (Fukuda-Parr, 2003), դրսևորվում է «մեթոդական անհա-

տականություն» (Sen, 2009): Նրա մոտեցումն ուղղված է անհատների վրա և չի զարգացնում կառուցվածքային, ինստիտուցիոնալ և մշակութային ուժեր, որոնք նպաստում կամ խոչընդոտում են սոցիալական զարգացումը (Abbott, P., Wallace, C. and Sapsford R., 2016, էջ 14):

Ի տարբերություն Սենի, ամերիկացի քաղաքական փիլիսոփայության ներկայացուցիչ Ջոն Ռոուլսը նշում է, որ արժանապատիվ կյանքը խաղ է, որի կանոնները պետք է սահմանվեն այնպես, որ բոլորը հավասարապես շահեն: Մնացած ամեն ինչ թուլացնում է հասարակության համախմբվածությունը և հանգեցնում է արժանապատիվ կյանքի որոշ անձանց համար՝ ի հաշիվ մյուսների նվազ արժանապատիվ գոյության: Խոսելով հասարակության համախմբվածության կարևորության մասին՝ Ջոն Ռոուլսը հիմնական շեշտադրումն ուղղում է տնտեսական բավարարվածության վրա (Rawls, 2001):

Արժանապատիվ կյանքի վերաբերյալ մոտեցումները տարբերվում են ոչ միայն տեսաբանների կարծիքներում, այլև տարբեր երկրների Հիմնական օրենքում: ՌԴ 1993թ. Սահմանադրության 7-րդ հոդվածի 1-ին մասն «արժանապատիվ կյանք»-ը սահմանում է որպես Ռուսաստանի սոցիալական քաղաքականության հիմնական ուղղություն, իսկ Ռումինիայի 1991թ.Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին կետը այն ձևակերպում է որպես պետության պարտականություն՝ ձեռնարկելու տնտեսական զարգացման և սոցիալական պաշտպանության միջոցներ, որոնք նախատեսված են քաղաքացիներին արժանապատիվ կենսամակարդակ ապահովելուն: Ֆինլանդիայի 1999թ. Հիմնական օրենքի 19-րդ պարագրաֆն արժանապատիվ կյանքը դիտարկում է սոցիալական ապահովության իրավունքի տեսանկյունից: Բելգիայի 1994թ. Սահմանադրությունը (2000թ.փոփոխություններով) առանձնացնում է արժանապատիվ կյանքի մի շարք բնութագրիչներ (հոդվ. 23), որոնց թվում, բացի սոցիալական ապահովագրությունը, առողջության պահպանումը, սոցիալական, բժշկական և իրավական օգնությունը, բնակարանային ապահովման, սոցիալական և մշակութային բարգավաճման իրավունքները, առողջ շրջակա միջավայրի իրավունքներն են:

Եթե հասկացության բովանդակությունը վերլուծենք մարդու իրավունքներին վերաբերող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերի[2] լույսի ներքո, ապա կարող ենք ասել, որ արժանապատիվ կյանքն այնպիսի կենսամակարդակ է, ներառյալ սնունդ, հագուստ, բժշկական օգնություն և անհրաժեշտ սոցիալական ծառայություններ, որն անհրաժեշտ է մարդուն իր և իր ընտանիքի առողջությունը պահպանելու, կարիքի մեջ չհայտնվելու, արժանապատիվ աշխատանք գտնելու, սոցիալականապես պաշտպանված լինելու համար: Բայցևայնպես, ազգային և միջազգային մակարդակներում վերջին տասնամյակում տեղի ունեցող զարգացումները նոր մոտե-

2 Տես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (հոդվ. 23, 25), Տնտեսական, սոցիալական և մշակութային իավունքների միջազգային դաշնագիրը (հոդվ.11), Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (մաս 1-ին կետ 4, հոդվ. 4, 23), սոցիալական ապահովման նվազագույն նորմերի մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 102 Կոնվենցիան և այլ միջազգային իրավական ակտերը:

ցումներ ու պահանջներ են ներկայացնում սոցիալական պետություններին, հատկապես հաշվի առնելով մարդկության կայուն զարգացման կարևորությունը:

«Արժանապատիվ կյանք» հասկացության սահմանադրական հայեցակարգավորման խնդիրները

Մարդկության զարգացման ազգային և միջազգային մակարդակներում վերջին տասնամյակում տեղի ունեցող զարգացումները նոր մոտեցումներ ու պահանջներ են ներկայացնում թե՛ հասարակությանը, թե՛ պետություններին և թե՛ անհատներին: Դա նշանակում է, որ մարդակենտրոն սահմանադրություն ունեցող պետությունը արժանապատիվ կյանք ապահովելու համար չի կարող բավարարվել կյանքի որակի և մակարդակի սոցիալ-տնտեսական առանձին խնդիրների լուծմամբ, որոնք, ի դեպ, հիմնականում մեկնաբանվում են «սպառողական զամբյուղ», «նվազագույն կենսապահովում», «նվազագույն աշխատավարձ» տեսանկյունից: Այն պետք է հաշվի առնի անձի ոչ միայն ֆիզիկական, այլ նաև տվյալ հասարակությունում անհրաժեշտ սոցիալապես ընդունելի ապրելակերպի համար ճանաչված սոցիալական, հոգևոր և այլ կարիքները, դրանց հասանելիությունն ու լիարժեք իրականացումը, հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելու հավասար հնարավորությունները և դրանց սահմանադրաիրավական երաշխիքների ամրագրումը:

Հաշվի առնելով այս խնդիրները, պետությունը մարդու արժանապատիվ կյանք ապահովելու համար նախևառաջ պետք է ընձեռի **յուրաքանչյուրի համար հնարավորությունների՝ կրթության, առողջապահության, և այլ հիմնական ծառայությունների, ենթակառուցվածքների (գազ, ջուր, էլեկտրաէներգիա, ճանապարհներ, տրանսպորտ և այլն) հասանելիություն,** որոնց միջոցով անձը կկարողանա իրագործել իր մարդային ներուժը և կյանքի նպատակները: Այս հնարավորությունները պետք է հասանելի լինեն բոլորին, ընդ որում կարևորվում է ոչ միայն դրանց մատչելիությունը, այլ նաև որակը: Վերջին տարիներին առանձնակի կարևորություն է ստանում նաև առողջ շրջակա միջավայրի ապահովումը:

Հաջորդ կարևոր խնդիրը, որը պետք է լուծի պետությունը՝ **անձի զբաղվածությունն ու եկամուտների հասանելիությունն է:** Մարդկանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման համար առանցքային նշանակություն ունեն աշխատավարձը, խնայողությունները և արտադրական այլ ակտիվները: Դրանց բացակայությունը մարդուն բացառում, մեկուսացնում և դուրս է մղում ակտիվ կյանքից: Աշխատանքի հնարավորությունների բացակայությունն էլ սահմանափակում է սոցիալական պաշտպանության համակարգերի, սոցիալական ծառայությունների և սոցիալական ցանցերի հասանելիությունը՝ դրանով իսկ մեծացնելով անձի երկարաժամկետ մեկուսացման ռիսկը: Այն նաև ազդում է եկամուտների աղքատության վրա: Պետության ակտիվ դերակատարությունն այս ոլորտում կարող է մեծ ներդրում ունենալ մարդկային կապիտալի մեջ և նվա-

զեցնել ռիսկերն ու մարդկանց միջև առաջացող անհավասարությունները:

Մարդու արժանապատիվ կյանքի ապահովումը թերի կլինի նաև , եթե հաշվի չեն առնվում **անհատների և խմբերի փոխհարաբերությունները և փոխազդեցությունները, ինչպես նաև նրանց քաղաքական մասնակցությունը**, ընդ որում, պարտադիր չէ, որ անձը օգտվի այդ բոլոր հնարավորություններից, կարևոր է, որ անհրաժեշտության դեպքում ապահովվի նրա իրավունքների հասանելիությունը: Ներառվածության այս տեսակետը պարտավորեցնում է պետությանը՝ հասարակության յուրաքանչյուր անդամի համար ստեղծել հասանելի հավասար հնարավորություններ և պայմաններ՝ մասնակցելու երկրի քաղաքական, քաղաքացիական և մշակութային կյանքին: Քաղաքական կյանքին մասնակցելու հավասար հնարավորությունը և հասարակության մեջ իշխանության, ձայնի և գործողությունների ազատության արդար բաշխումը կարևոր են, որպեսզի ոչ ոք չանտեսվի ու չհայտնվի կարիքի մեջ: Եթե «քաղաքացիություն» հասկացությունը դիտարկենք ավելի լայն տեսանկյունից, քան անձի իրավական կարգավիճակն է, ապա, ըստ ՄԱԿ-ի փորձագետների կարծիքի, այն կներառի նաև ռեսուրսների մատչելիությունը (ներառյալ կենսաթոշակները), հնարավորությունները, մասնակցությունը, ընտրության ազատությունը և սոցիալական շարժունության իրավունքը (Report, 2016, էջ 84): Մասնակցային նման գործընթացներում ձևավորվում են հարաբերություններ և ցանցեր, որոնք կարող են հանգեցնել կոլեկտիվ գործողությունների և ստեղծել սոցիալական կապիտալ, ինչն իր հերթին ազդում է զբաղվածության, եկամուտների, առողջապահության և կրթության հասանելիության վրա, ապահովում անհատի ազատ զարգացումը:

Տրամադրելով վերը նշված հնարավորությունները, պետությունը պետք է միաժամանակ հոգ տանի, որպեսզի իրացվեն յուրաքանչյուրի իրավունքները և որ ոչ ոք չանտեսվի կամ չմնա ետևում: Սակայն, եթե օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ մարդկանց կենսական պահանջմունքների բավարարումը դժվարանում է կամ դառնում է անհնարին, ապա պետությունը պարտավորվում է պետական և ոչ պետական մարմինների միջոցով **ապահովել բնակչության սոցիալական անվտանգությունը՝** սոցիալական ռիսկերի կանխարգելման, ինչպես նաև դրանց հետևանքների մեղմացման և վերացման միջոցով (Ցարմալոյան, 2016, էջ 26):

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ մարդու արժանապատիվ կյանքի նպատակին հասնելու վերը նշված քաղաքականությունները ինքնին չեն կարող հանգեցնել հաջողության, եթե երկրում չձևավորվեն սոցիալական պետության գործառնության համար անդառնալի օրենսդրական և վարչական կառուցակարգեր (Багдай, 2007, էջ 138): Դրա ապահովման միակ միջոցն է սոցիալական պետության սահմանադրաիրավական սկզբունքի իրագործումը իրավունքի բոլոր ոլորտներում, ինչն իր հերթին ենթադրում է համապատասխան **իրավական երաշխիքների ամրագրում** երկրի Հիմնական օրենքում:

Արժանապատիվ կյանքի և ազատ զարգացման ապահովումն էլ իր

հերթին խթանում է ընդհանուրի բարեկեցությունը, նպաստում սոցիալական համախմբմանը և սոցիալական համերաշխությանը, երաշխավորում երկրի կայուն զարգացումն ու անվտանգության ամրապնդումը: Դեռ 19-րդ դարում Շտեյնը նշում էր, որ «մեկի զարգացումը մյուսի զարգացման պայմանն է», այսինքն՝ ունի կոլեկտիվ բնույթ, նվաճվում է կոլեկտիվ ջանքերով: Այստեղից էլ եզրակացնում ենք, որ տվյալ նպատակի իրականացումը նախապայման է սոցիալական պետության մեկ այլ կարևոր նպատակի՝ ընդհանուրի բարեկեցության ապահովման համար: Սակայն, այս պարագայում ընդհանուրի բարեկեցությունը չի դիտարկվում որպես առանձին անհատների բարեկեցության մեխանիկական համախմբում: Այն պահանջում է կոլեկտիվ համաձայնություն և համատեղ գործողություններ՝ բոլորի համար սոցիալական արդարություն ապահովելու նպատակով: Մարդիկ համատեղ պաշտպանվում են աղքատությունից և նյութական զրկանքներից, կիսում իրենց սպասելիքներն ու ապրում հասարակության մեջ, որը համախմբում և կառավարում է հասարակությունում առկա հարաբերությունները՝ ապահովելով սոցիալական համախմբվածություն: Այս պայմաններում պետությունը ոչ միայն օգնում է առանձին անհատների, այլ նաև ձևավորում է **արժանապատիվ հասարակություն**, որտեղ յուրաքանչյուրին տրամադրվում են հավասար մասնակցության հնարավորություններ ու պայմաններ, ինչը թույլ է տալիս անձին ոչ միայն շփվել, փոխգործակցել այլ անձանց հետ, այլ նաև մնալ այնպիսին, ինչպիսին ինքը կա:

Սոցիալական պետության այս երկու սկզբունքները կազմում են պետության ինքնիշխանության սոցիալական բաղադրիչը: Դա հիմնավորվում է նրանով, որ պետական ինքնիշխանությունը մարմնավորում է պետական իշխանության մարմինների իրավաբանական և սոցիալական լեգիտիմությունը, այսինքն՝ ժողովրդի՝ որպես իշխանության աղբյուրի, անունից լուծելու երկրի ներքին և արտաքին քաղաքականության հետ առնչվող ցանկացած հարց (Իկիլիկյան, 2016, էջ 8), իսկ ինչպես արդեն փաստել ենք՝ հայ ժողովրդի կամքը միտված է ապահովելու ինչպես հասարակության յուրաքանչյուր անդամի, այնպես էլ ողջ երկրի կայուն և անվտանգ զարգացումը, հասարակական-քաղաքական համերաշխությունը, համախմբվածությունն ու ընդհանուր բարօրությունը:

Արժանապատիվ հասարակության պայմաններում տեղի է ունենում նաև «անձնական» և «հասարակական» սկզբունքների համաձայնեցում: Սոցիալական պետության վերաբերյալ առկա մոտեցումները դուրս են բերվում անհատին վերաբերող նեղ նոմիզմից և համապատասխանեցվում են սոցիալական իրականության բազմազանությանն ավելի մոտ կանգնած բազմակարծությանը (Эбзеев, 2008, էջ 46): Փոխհարաբերությունների նոր հարթության վրա է դրվում նաև պետություն-անհատ հարաբերությունների մակարդակը, փոփոխվում է փոխադարձ իրավունքների ու պարտականությունների ծավալի իրավաընկալումը:

Սոցիալական պետության պարտականությունների տեսանկյունից կարևոր է դառնում, թե արժանապատիվ կյանքի ինչ մակարդակ պետք է

ապահովի պետությունը՝ նվազագո՞ւյն, թե՞ բավարար: Եթե ելնենք արժանապատիվ կյանքի ապահովման գործում պետության մասնակցության արտաքին-ֆունկցիոնալ (էկզոգեն[3]) հայեցակարգից, ապա պետությունն ի զորու կլինի նպաստների, սոցիալական օգնությունների և սոցիալական աջակցության միջոցով ապահովել միայն կյանքի նվազագույն մակարդակ: Այս դեպքում պետությունը՝ սահմանափակվելով սուբսիդիար պատասխանատվությամբ, դրսևորում է միակողմանի մոտեցում, նպաստում է պատերնալիզմին, խնամառությանը և պասիվությանը: Մարդիկ կորցնում են ինքնադրսևորվելու, ինքնահիրացվելու ձգտումը, աշխատանքի մոտիվացիան: Պատահական չէ, որ այդ պայմաններում եկամտի հիմնական աղբյուր է դառնում ոչ թե զարգացած, տեխնոհեն տնտեսությունը, այլ երկրի բնական պաշարների, հանքերի շահագործումը:

Ներքին-ակտիվ (էնդոգեն[4]) մոտեցման դեպքում պետությունը ողջ պատասխանատվությունը դնում է անձի վրա: Այն մոտ է վերջին տասնամյակներում շրջանառվող «աշխատանքի պետություն» (workfare state) հայեցակարգին, ըստ որի յուրաքանչյուր մարդ պետք է աշխատի և ինքնուրույն ապահովի իր բարեկեցությունը: Իրավագետների մի մասն այս մեկնաբանությունն է տալիս նաև սոցիալական շուկայական տնտեսություն ունեցող համակարգերին, որտեղ «ազատ անհատի հայեցակարգը» ելակետային է համարում անձի ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը սեփական գործողությունների համար: Կարևորելով վերջին սկզբունքը, ցանկանում ենք նշել, որ միայն անհատի պարտականություններին հղում անելը հանգեցնում է մեկ այլ ծայրահեղության: Նման նեղ մեկնաբանման պայմաններում պետությունը չի ստանձնում բարեկեցության ապահովման հստակ պարտականություններ իրավական նորմերի և ինստիտուտների համապատասխան համակարգի ստեղծման և երաշխիքների տրամադրման հարցում, այլ հանդես է գալիս հիմնականում պահանջողի դերում: Սակայն պետք է հիշել, որ ժամանակակից ժողովրդավարական պետությունները բնութագրվում են որպես սոցիալ-իրավական պետություններ, որտեղ իրավական պետության հիմնական սկզբունքներից են պետության և անհատի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, իսկ սոցիալական պետությանը՝ սոցիալական պատասխանատվությունը: Հետևաբար՝ այստեղ խոսքը գնում է ոչ միայն անհատի, այլ նաև պետության պարտականությունների, ինչպես նաև վերջինիս սոցիալական պատասխանատվության մասին: Հիմնախնդրի այս դիտակետը պարտականություններ է սահմանում առաջին հերթին պետության համար, որը պատասխանատու է մարդու կատարելագործման, ստեղծագործական ակտիվութ-

3Համաձայն այս տեսակետի՝ քաղաքացու բարեկեցության հիմնական գործոնը և աղբյուրը պետությունն է, որն ինքնակամ ստանձնում է պատասխանատվություն որոշակի մակարդակի վրա պահպանել անձի կյանքը (Саудаханов, 2019, էջ 46):

4 Ըստ այս տեսակետի՝ արժանապատիվ կյանքի կերտումն ու պահպանումը ամբողջությամբ գտնվում է մարդու ձեռքերում, ուղղակիորեն կախված է նրա կողմից կայացված որոշումներից և կատարած գործողություններից, իսկ պետությունն այս դեպքում պատասխանատու է միայն անհատների համար բարենպաստ պայմաններ և հնարավորություններ ստեղծելու համար, այսինքն՝ ըստ էության խաղում է օժանդակ դեր (Саудаханов, 2019, էջ 46):

յան և ստեղծարար ներուժի զարգացման համար: Պետության պարտականությունների նման իրականացման պայմաններում անձի էտատիկ աշխարհայացքն իր տեղն է զիջում «սեփական ուժերի և հնարավորությունների հայեցակարգին» (Будюк, 2006, էջ 78) և պարտավորեցնում վերջինիս պատասխանատու լինել սեփական ճակատագրի համար: Սակայն պետության պարտականությունները դրանով չեն սահմանափակվում, քանզի հասարակությունում միշտ էլ առկա են մարդիկ, որոնք ունեն պետության հոգածության կարիք: Այդ իսկ տեսակետից պետությունը պետք է զուգորդի հավասար հնարավորությունների և պայմանների ապահովումը, նպատակային և հասցեական սոցիալական քաղաքականությամբ: Անհատ-պետություն փոխհարաբերությունների նման հայեցակարգավորման պայմաններում պետությունն ի զորու է յուրաքանչյուրի համար ապահովել մարդու արժանավայել կյանքի բավարար կենսամարդակ:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա բավարար կենսամակարդակի իրավունքն ամրագրվել էր 1995թ. Սահմանադրության 2-րդ գլխի 31-րդ հոդվածում, որը նախատեսվում էր յուրաքանչյուր քաղաքացու համար: 2005թ. խմբագրության Սահմանադրությունը տվյալ իրավունքը (հոդվ. 34) «վերապահեց յուրաքանչյուրին՝ անկախ քաղաքացիությունից կամ այլ հատկանիշից, ինչն առավել ընդունելի է և արդի միջազգային իրավական չափանիշներին համապատասխան» (Հարությունյանի, Գ., Վաղարշյանի, Է. ընդհանուր խմբագրությամբ, 2010, էջ 424): Հոդվածը սահմանում էր, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»:

2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հրաժարվեց վերը նշված մոտեցումից և որպես օրենսդրական երաշխիք 84-րդ հոդվածի 1-ին կետում սահմանեց, որ «Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք»: Մեր կարծիքով այս դրույթը խնդրահարույց է երկու տեսանկյուններից:

Առաջին՝ հոդվածը խոսում է ոչ թե «արժանապատիվ կյանքի», այլ «արժանապատիվ գոյության» մասին: Է.Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ը (Սուքիասյան, 2009, էջ 210) և Է.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ը (Աղայան, 1976, էջ 253) իմաստային առումով «գոյություն» եզրույթը սահմանում են որպես լինելիություն, գոյացություն, կյանք, առկայություն, գոյ, սակայն միևնույն ժամանակ, Է.Աղայանի բառարանը սահմանում է վերջինիս օգտագործումը նաև փոխաբերական իմաստով՝ որպես պայքար հանուն կյանքը պահպանելու՝ ապրելու: Այնպես որ «արժանապատիվ գոյության իրավունք» հասկացության կիրառումը վերջին իմաստային նշանակությամբ ձեռք է բերում բացասական նշանակություն և նվազեցնում արժանապատիվ կյանքի իրավունքի բովանդակային իմաստն ու արժեքը:

Երկրորդ խնդիրը կայանում է նրանում, որ սոցիալական պետության

տեսությունն ու միջազգային պրակտիկան ելնում են յուրաքանչյուրի բարեկեցության հայեցակարգից: Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համաձայնագրերը, պարտավորություն է ստանձնել ապահովելու յուրաքանչյուրի իրավունքներն ու ազատությունները: Ավելին, կայուն զարգացման 2030 օրակարգ» հանձնարարականը սահմանում է, որ ՄԱԿ-ի անդամ պետությունները պետք է ձգտեն ապահովել այնպիսի զարգացում, որի հիմքում են մարդու իրավունքների և արժանապատվության հարգումը, իրավունքի գերակայությունը, արդարությունը, հավասարությունն ու խտրականության բացառումը, ապահովեն բոլորի և յուրաքանչյուրի իրավունքների առավել լիարժեք իրականացումը, մարդկանց երջանկությունը և իրագործեն ոչ ոքի չանտեսելու սկզբունքը: ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդվածն «արժանապատիվ գոյության իրավունք» է տրամադրում միայն կարիքավոր և տարեց մարդկանց, ինչն ինքնին տարբերակում է մտցնում մարդկանց միջև: Այդ իսկ պատճառով առավել նպատակահարմար ենք գտնում «կարիքավոր և տարեց մարդկանց արժանապատիվ գոյություն» կապակցությունը փոխարինել «**յուրաքանչյուրի արժանապատիվ կյանք»-ի իրավունքով**:

Եզրակացություն

Մարդու արժանապատիվ կյանքի իրավունքը սոցիալական պետության հիմնական նպատակներից մեկն է: Մարդակենտրոն սահմանադրականության պայմաններում այն ուղղված է անձի ոչ միայն ֆիզիկական, այլ նաև տվյալ հասարակությունում անհրաժեշտ սոցիալապես ընդունելի ապրելակերպի համար ճանաչված անձի սոցիալական, հոգևոր և այլ կարիքների, դրանց հասանելիության ու լիարժեք իրականացման, առողջ շրջակա միջավայրում ապրելու, հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելու հավասար հնարավորությունների և սահմանադրաիրավական երաշխիքների ամրագրմանը:

Արժանապատիվ կյանքի և ազատ զարգացման ապահովումն իր հերթին խթանում է ընդհանուրի բարեկեցությունը, նպաստում սոցիալական համախմբմանը և սոցիալական համերաշխությանը, երաշխավորում երկրի կայուն զարգացումն ու անվտանգության ամրապնդումը, ձևավորում արժանապատիվ հասարակություն, որտեղ յուրաքանչյուրին տրամադրվում են հավասար մասնակցության հնարավորություններ ու պայմաններ, ինչը թույլ է տալիս անձին ոչ միայն շփվել, փոխգործակցել այլ անձանց հետ, այլ նաև մնալ այպիսին, ինչպիսին ինքը կա, դրանով իսկ ապահովելով պետության ինքնիշխանության սոցիալական բաղադրիչը:

Այսպիսով, ըստ մեզ՝ մարդու արժանապատիվ կյանքը անձի հնարավորությունների, զբաղվածության և եկամուտների հասանելիության, քաղաքական, քաղաքացիական և մշակութային կյանքի մասնակցության ապահովումն է, որի ուժով պետությունը ստանձնում է յուրաքանչյուրի համար հավասար մեկնարկային պայմաններ ու հնարավորություններ ստեղծելու, մարդկային և սոցիալական կապիտալի զարգաց-

ման, սոցիալական ռիսկերի կառավարման պատասխանատվություն, իսկ անհատը՝ սահմանադրաիրավական իրավունքների, ազատությունների, պարտականությունների և երաշխիքների շրջանակներում պարտավորվում է ինքնուրույն հոգ տանել իր և իր ընտանիքի անդամների բարեկեցության մասին:

Օգտագործված գրականության ցանկ

ՀՀ Սահմանադրություն: (ընդունված 1995թ. հուլիսի 5-ին՝ 2005թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով):

Преобразование нашего мира: Повестка дня в области устойчивого развития на период до 2030 года. (25 сентября 2015 года). Резолюция, принятая Генеральной Ассамблеей ООН.

Աղայան, Է. Բ. (1976): *Արդի հայերենի բացատրական բառարան:* Երևան: «Հայաստան» Հրատարակչություն:

Այվազյան Ն.Է., Այվազյան Վ.Ն., Դանիելյան Գ.Բ., Հարությունյան Գ.Գ., Հարությունյան Է.Շ.,Հովհաննիսյան Վ.Հ., Ստեփանյան Վ.Վ.. (2016): *Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք. Գիրք առաջին:* Եր.: «Տիգրան Մեծ» հրատ.:

Իկիլիկյան, Է. (2016): *Ինքնիշխանությունը որպես պետաիրավական ինստիտուտ (պատմատեսական վերլուծություն):* Երևան: Սեղմագիր....իրավաբ. գիտ. թեկ.... հայցման ատենախոսության:

Հարությունյանի, Գ., Վաղարշյանի, Է. ընդհանուր խմբագրությամբ (2010): *Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ:* Եր.: «Իրավունք»:

Յարմալոյան, Մ. (2016): «Սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը. Կատեգորիալ վերլուծություն: *«Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», թիվ 2*, էջեր 21-27:

Սուքիասյան, Է. Մ. (2009): *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան:* Երևան: Երևանի Պետական Համալսարան:

Арбузов, С. (2014). *Конституционно-правовые основы формирования социального государства в Российской Федерации.* Петрозаводск: Дисс...к.ю.н..

Баглай, М. В. (2007). *Конституционное право Российской Федерации : учеб. для вузов* (6-е изд., изм. и доп. խմբ.). М.: Норма.

Беребина, О. (1999). *Уровень пенсионного обеспечения: современное состояние и перспективы.* М.

Будюк, Т. (2006). *Влияние государственной собственности на формирование среднего класса в условиях рыночной экономики.* М.: Дисс. ... канд. экон. наук.

Дмитриев, Ю.А., отв. ред. . (2009). *Конституция Российской Федерации: доктринальный комментарий (постатейный).* М.: «Деловой двор».

Салихова, И. (2009). Право человека на достойную жизнь как юридическая категория . *Пробелы в российском законодательстве., № 4.*, էջեր 129-133.

Саудаханов, М. (2019). Человек и его право на достойную жизнь. *Образование. Наука. Научные кадры, 3*, էջեր 44-46. DOI 10.24411/2073-3305-2019-10129

Старшова, У. (2004). *Конституционные основы социального государства в Российской Федерации.* Саратов: Автореферат диссертации ... кандидата юридических наук.

Эбзеев, Б. (2008). *Личность и государство в России: взаимная ответственность и конституционные обязанности.* М.

Abbott, P., Wallace, C. and Sapsford R. (2016). *The Decent Society.* New York: Routledge, Taylor & Francis Group.

Fukuda-Parr, S. (2003). Rescuing the human development concept from the HDI. S.Fukuda-Parr, & A.Shiva Kumar (Խմբ-ներ), *Readings in Human Development* (էջեր 117-124). New Delhi: Oxford University Press.

Rawls, J. (2001). *Justice and Fairness: A Restatement.* Cambridge (MA): Belknap.

Report. (2016). *Leaving no one behind: the imperative of inclusive development. Report on the World Social Situation.* United Nations, Department of Economic and Social Affairs. New York: United Nations.

Sen, A. (1993). Capability and wellbeing. M. Nussbaum, & A. Sen (Խմբ-ներ)ի մոտ, *The Quality of Life* (էջեր 30-53.). Oxford: Clarendon Press.

Sen, A. (2009). *The Idea of Justice.* London: Penguin.

References

HH Sahmanadrutyun: (The Constitution of the Republic of Armenia), (yndunvac 1995t.hulisi 5-in՝ 2005t. noyemberi 6-i popokhutyunnerov): (In Arm.)

Preobrazovanie nashego mira: Powestka dnya v oblasti ustoichevogo razvitiya na period do 2030 goda. (Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development), (25 sentyabrya 2015 goda). Rezolyuciya, prinyataya Generalnyi Assambleey OON. (In Russ.)

Aghayan, E. B. (1976): *Ardi hayereni bacatrakan bararan* (Explanatory Dictionary of Modern Armenian), Erevan: «Hayastan» Hratarakchtyun: (In Arm.)

Ayvazyan N.A., Ayvazyan V.N., Danielyan G.B., Harutyunyan G.G., Harutyunyan A.Sh., Hovanisyan V.H., Stepanyan V.V.: (2016). *Hayastani Hanrapetutyan sahmanadrakan iravunq. Girq arajin* (Constitutional Law of the Republic of Armenia. Book one): Er.: «Tigran Mets» hrat: (In Arm.)

Ikilikyan, A. (2016). *Inknishkhanutyuny vorpes petairavakan institut* (Sovereignty as a state-legal institute (historical and theoretical analysis)): Erevan: Seghmnagir….. iravab. git. Tek….haycman atenakhosutyan: (In Arm.)

Harutyunyani, G., Vagharshyani A. yndhanur khnbagrutyamb: (2010): *Hayastani Hanrapetutyan Sahmanadrutyan meknabanutyunner* (Comentaries to the Constitution of the RA): Er.: «Iravunq»: (In Arm.)

Yarmaloyan, M. (2016): *«Socialaka pashtpanutyun» ezruyti bovandakutyuny. Kategorial verlutcutyun* (The Content of the Term "Social Protection": a Categorial Analysis) *«Banber Erevani Hamalsarani. Sociologia, Tntesagitutyun», tiv 2*, ejer 21-27: (In Arm.)

Sukiasyan, A.M. (2009): *Hayoc lezvi homanishneri bacatrakan bararan* (Explanatory Dictionary of Synonyms of the Armenian Language): Erevan: Erevani Petakan Hamalsaran: (In Arm.)

Arbuzov, S. (2014). *Konstitucionno-pravovie osnovi formirovaniya socialnogo gosudarstwa v Rossiyskoy Federacii.* (Constitutional and legal foundations of the formation of a social state in the Russian Federation) Petrozavodsk: Dicc…k.yu.n.. (In Russ.)

Baglay, M.V. (2007). *Konstitucionnoe pravo Possiyskoy Federacii: ucheb. dlya busob (6-e izd., izm. i dop.)* (Constitutional law of the Russian Federation: textbook for universities). M.: Norma. (In Russ.)

Beredina, O. (1999). *Uroven pensionnogo obespecheniya: sovremennoe sostoyanie i perspektibi* (Pension provision level: current status and prospects). M. (In Russ.)
Budyuk, T. (2006). Vliyanie gosudarstvennoy sobstvennosti na formirovanie srednego klassa v uslowiyakh rinochnoy ekonomiki. (The influence of state ownership on the formation of the middle class under market economy conditions). M.: Diss. ... kand. ekonom.nauk. (In Russ.)
Dmitriev, Yu.A., otv. red. (2009). *Konstituciya Possiyskoy Federacii: doktrinalniy kommentariy (postateyniy)* (Constitution of the Russian Federation: doctrinal commentary (itemized)). M.: "Delovoy dvor". (In Russ.)
Salikhova, I. (2009). *Pravo cheloveka na dostoynuyu jizn kak yuridicheskaya kategoriya* (The human right to a dignified life as a legal category). Problemi v possiyskon zakonodatelstve, *№ 4.*, ejer 129–133. (In Russ.)
Saudakhanov, (2019). *Chelovek i ego pravo na dosotynuyu jizn* (The Man and his right to a decent life). Obrazovanie. Hauka. Nauchnie kadri, 3, ejer 44–46. DOI 10.24411/2073–3305–2019–10129 (In Russ.)
Strashova, U. (2004). *Konstitucionnie osnovi socialnogo gosudarstva v Possiyskoy Federacii* (The constitutional foundations of the social state in the Russian Federation). Saratov: Avtoreferat dissertacii...kandidata yuridicheskikh nauk. (In Russ.)
Ebzeev, B. (2008). *Lichnost i gosudarstvo: vzaimnaya otvetsvtennost i konstitucionnie obyazannosti* (Person and state in Russia: mutual responsibility and constitutional duties). M. (In Russ.)
Abbott, P., Wallace, C. and Sapsford R. (2016). *The Decent Society.* New York: Routledge, Taylor & Francis Group. (In Eng.)
Fukuda–Parr, S. (2003). Rescuing the human development concept from the HDI. S.Fukuda–Parr, & A.Shiva Kumar (Խմբ–ներ)ի մոտ, *Readings in Human Development* (էջեր 117–124). New Delhi: Oxford University Press. (In Eng.)
Rawls, J. (2001). *Justice and Fairness: A Restatement.* Cambridge (MA): Belknap. (In Eng.)
Report. (2016). *Leaving no one behind: the imperative of inclusive development. Report on the World Social Situation.* United Nations, Department of Economic and Social Affairs. New York: United Nations. (In Eng.)
Sen, A. (1993). Capability and wellbeing. M. Nussbaum, & A. Sen (Խմբ–ներ)ի մոտ, *The Quality of Life* (էջեր 30–53.). Oxford: Clarendon Press. (In Eng.)
Sen, A. (2009). *The Idea of Justice.* London: Penguin. (In Eng.)

Рафик Петросян
Заведующий юридической кафедройМеждународного университета Евразия,
Доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

Нуне Джомардян
Руководитель Центра международных связей и исследований
Международного университета Евразия,
заместитель заведующего юридической кафедры, соискатель кафедры

КОНСТИТУЦИОННЫЙ ХАРАКТЕР ДОСТОЙНОЙ ЖИЗНИ ЧЕЛОВЕКА В ГОСУДАРСТВЕ С СОЦИАЛЬНОЙ РЫНОЧНОЙ ЭКОНОМИКОЙ

Статья посвящена анализу понятия «достойная жизнь человека» как основной цели социального государства. В исследовании приняты во внимание тенденции

развития последнего десятилетия на национальном и международном уровнях, привнесшие новые подходы и требования к социальным государствам, особенно подчеркивая необходимость устойчивого развития человечества. Авторы изучили подходы к понятию «достойная жизнь человека» и проблемы его конституционной концептуализации, основываясь на сравнительно-правовом анализе существующих в научной литературе подходов, на обеспечении условий конституции, ориентированной на человека, на осуществлении прав каждого, на равных возможностях и стартовых условиях, а также на учете требований, что никто не будет забыт. В статье также представлены возможные пути решения данных проблем.

Ключевые слова: достойная жизнь, социальное, обязанность, возможности, правовое, конституция.

Rafik Petrosyan
Head of the Department of Law at Eurasia International University,
Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA

Nune Jomardyan
Head of International Relations and Research Center,
Deputy Head of Law Department at Eurasia International University, Ph.D student

THE CONSTITUTIONAL NATURE OF "A DECENT LIFE FOR A PERSON" IN A STATE WITH SOCICAL MARKET ECONOMY

The article analyzes the concept of "decent life for a person" as one of the main goals of the welfare state. The study takes into account the developments of the last decade at the national and international levels which bring new approaches and demands to the welfare states. The need for sustainable human development has been considered as well. The authors studied the approaches and the issues of constitutional conception of "decent life for a person" based on the legal-comparative analysis of views in the scientific literature, provision of a people-centered constitution, the realization of everyone's rights, equal opportunities and conditions for starting conditions, as well as on the requirements of the concept "no one will be left behind". The article also elucidates some possible solutions of these issues.

Key words: decent life, social, duty, opportunities, legal, constitution.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. փետրվարի 25-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. մարտի 4-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. մարտի 19-ին: